Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ

Թեմա՝ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐ

Վերապատրաստող, մենթոր՝ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՐԻՆԵ

Ուսուցիչ՝ ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
ՀԱՍԱՐԱԿԱԿՑԱԿԱՆ ՌԻՍԿԱՅՈՒԹՅՈՒՆ 5
ՀԱՍԱՐԱԿԱԿՑԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ 7
2.1 ԴՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԱԽՄՈՒԹՅՈՒՆ 8
2.2 ԴԵՄԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱՐՔԵՑՈՒԹՅՈՒՆ 9
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱԾԱԽՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅՈՒՆ 10
4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10
5. ՌԻՍԿԻ ՏԵՍԱԿԸ ՀԱՍԱՐԱԿԱԿՑԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 12
5. 1 ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 13
5. 2 Դասի պլանի ձև 14
5. 3 Դասից հետո 16
Եզրակացություն 17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

Ներածություն

Դասավանդումն ուսուցչի փորձի և գործնական աշխատանքի ընթացքում կուտակած իմաստության զուգակցման արվեստն է։Հասարակության մեջ ուսուցչին մասնագիտական կարգավիճակ է տրվում։Նրանից պահանջվում է լավագույն մեթոդների օգնությամբ աշակերտներին զինել տարրական հմտություններով ու գիտելիքներով։Այլևս բավարար չէ երեխաների նկատմամբ ուսուցչի ջերմ ու սիրառատ վերաբերմունքը,ոչ էլ սոսկ ըմբռնման ,անձնական նախընտրության կամ անձնական մտածելակերպի հիման վրա դասավանդման որևէ մեթոդի կիրառման հիմնավորումը։Ժամանակակից ուսուցիչները պարտավոր են կիրառել դասավանդման այնպիսի մեթոդներ,որոնց արդյունավետության մեջ համոզվել են գործնականում։Խիստ կարևոր է,որ ուսումնառության ընթացքում բոլոր ուսուցիչներն օգնեն սովորողներին,սակայ այդ օգնությունը չպետք է դառնա միանձնյա ղեկավարում կամ սոսկ վերահսկում։

Այս խնդիրը ասես մարտահրավեր է նետում այսօրվա մանկավարժներին,որի ընդունումը և լուծումը դասավանդման ամենահետաքրքրական կողմերից մեկն է,ինչը սեփական աշխատանքից բավարարվածության զգացում է պարգևում։

Դասավանդումն ուսուցչի փորձի և գործնական աշխատանքի ընթացքում կուտակած իմացության զուգակցման արվեստն է հասարակության մեջ։

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Այս աշխատանքի նպատակն է ներկայացնել համագործակցային ուսուցման ներդրման անհրաժեշտությունը։

Համագործակցային ուսուցման ներդրման միջոցով ապահովել ուսման բարձր որակ, որի հիմնական արդյունքներից մեկը անհատի կողմից աշխատանքի շուկայում կամ շարունակական կրթության համակարգում իր տեղը հեշտությամբ գտնելու համար անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների ձեռքբերումն է։

ԽՆԴԻՐՆԵՐԸ

●Ներկայացնել սոցիալական հմտությունների կարևորությունը արագորեն փոփոխվող և զարգացող հասարակություններում և աշխարհում։

●Ներկայացնել ակադեմիական գիտելիքների ձեռքբերման և ամրապնդման, դրանց կիրառման հմտությունների ձեռքբերման, սոցիալական և ինքնաճանաչման հմտությունների զարգացման գործում համագործակցային ուսուցման առանցքային դերն ու կարևորությունը։

●Ներկայացնել համագործակցային ուսուցման մոտեցումը։

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Համագործակցային ուսումնառությունը դասավանդման համակարգված,կանոնակարգված ռազմավարություն է,որի դեպքում աշակետների փոքր խմբերը համատեղ աշխատանք են ծավալում ընդհանուր որևէ նպատակի իրագործման կամ խնդրի լուծման համար։Համագործակցային ուսումնառությունը համատեղ ուսումնառության մի տեսակ է։Այն ներառում է խմբային ուսումնառության բազմապիսի տարբերակներ,ինչպիսին են համագործակցային ուսուցումը հասակակիցների խմբերում,ուսուցիչ-աշակերտ հետազոտական ծրագրերի իրականացումը,<<բզզացող >> խմբերով կարճաժամկետ աշխատանքը,սավորողների համայնքների կազմակերպումը և այլն։Համգործակցային ուսումնառության արմատներն հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին,որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ,որը քաղաքացիներին սոցիլ-ժողովրդավարական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս։Քննադատական մտածողության,արժանապատվության զգացման, միջէթնիկական հարաբերությունների,հասարակամետ վարքագծի և շատ այլ չափանիշների վրա համագործակցային ուսումնառության ազդեցության դիտարկումներն ու վերլուծությունները ցույց են տվել,որ այս մեթոդը դասավանդման ավանդական ձևերից առավել գերադասելի է և հազվադեպ է զիջում դասավանդման այլ տեսակներին։

Համագործակցային ուսումնառության մեթոդները կիրառելուց առաջ ուսուցիչը պետք է խորհի հետևյալ հարցերի շուրջ.

1.Երբ ինքներդ աշակերտ էիք,համատեղ աշխատելու կամ սովորելու գործընթացում ինչն էր ավելի շատ դուր գալիս ձեզ,իսկ ինչը՝ ոչ։

2.Ինչ կարող են աշակերտները սովորել համատեղ աշխատելու դեպքում։

3.Համատեղ ուսումնառության որ կողմերն են հատկապես արդյունավետ։

ՈՒսուցչակենտրոն մեթոդով վարվող դասերի ընթացքում ուսուցիչներն աշխատում են հիմնականում ամբողջ դասարանի հետ,կամ էլ ուսումնասիրվող թեմայի,նյութի

բովանդակության որևէ հատվածը յուրացնելու համար աշակերտներն անհատական աշխատանք են կատարում։Այդ դասերի նպատակն ու կառուցվածքը հիմնված են անհատական մրցակցության և ջանքերի վրա։Մինչդեռ համագործակցային ուսումնառության դեպքում աշակերտներին խրախուսում և նրանցից պահանջում են միասին աշխատել որևէ ընդհանուր առաջադրանքի վրա։

ՀՈՒ մեթոդով վարվող դասերը բնորոշվում են հետևյալ առանձնահատկություններով.

1.ՈՒսումնական նպատակների իրականացման համար աշակերտներն աշխատում են թիմերով։

2.Թիմերում ընդգրկված են ուժեղ,միջին և թույլ աշակերտներ։

3.Խրախուսվում է ամբողջ խումբը և ոչ թե որևէ անհատ։

Համագործակցային ուսումնառությունը կարող է օգտակար լինել թե ցածր,թե բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների համար,ընդ որում՝ առավել ուժեղ աշակերտներն օգնում են մյուսներին։Համագործակցային ուսումնառությունը աշակերտներին հնարավորություն է ընձեռնում նաև աշխատել փոխադարձ կախվածության պայմաններում,ինչպես նաև սովորել գնահատել միմյանց։ՀՈՒ նպատակներից մեկն էլ աշակերտներին համագործակցության և համատեղ աշխատանքի հմտություններով <<զինելն>> է։

ՀՈՒ մեթոդով դասերը վարելու 6 հիմնական քայլերն են.

1.Դասի նպատակների հստակ սահմանում։

2.Սովորելու շահագրգռվածության ապահովում(շարժառիթի,դրդապատճառի ստեղծում)։

3.Տեղեկատվության մատուցում։

4.Աշակետների տրոհումը թիմերի(համագործակցային խմբերի ստեղծում)։

5.ՈՒսուցչի աջակցությամբ աշակերտների թիմային աշխատանքի կազմակերպում։

6.Թիմային աշխատանքի վերջնական աշխատանքի ներկայացում։

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑԱՆ ՏԱՐԵՐԸ

Համագործակցայն ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճան է,որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում։Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են ,որ կարող են ապահովել համագործակցայինուսուցում։Շատ են պատահում դեպքեր,երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերն արդյունք չեն ունենում։Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել,ապա դա չի նշանակում,որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության։Համագործակցային ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր,որոնց անվանում են համագործակցային ուսուցման տարրեր։Լավ և վատ կառուցված դասերը տարբերվում են հենց այդ տարրերի առկայությամբ և բացակայությամբ։Ավելին,հենց այդ տարրերն են ,որ պետք է ապահովեն համագործակցային ուսուցումը դասի բոլոր փուլերում։Համագործակցային տարրերն ըստ Ջոնսոնների հինգն են.

.դրական փոխկախվածություն

.դեմ առ դեմ փոխազդեցություն

.անհատական հաշվետվություն և պատասխանատվություն

.միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ

.խմբային գործընթաց/մշակում

.փոխներգործում/ինտերակտիվ առաջադրանք,որը ապահովում է համապատասխան պայմաններ մյուս տարրերի կիրառման ու զարգացման համար։

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում համագործակցային միջավայրի ձևավորմանը,օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը,պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գանահատման և արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը։

Համագործակցային ուսուցման տարրերի անընդհատ օգտագործման արդյունքում խմբերը կարող են հասնել համագործակցության բարձր մակարդակի։

2.1 ԴՐԱԿԱՆ ՓՈԽԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Համագործակցային ուսուցման ապահովման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական,աջակցող փոխկախվածության ապահովում։Դրական փոխկախվածությունն այն զգացումն է,որ խմբի յուրաքանչյուր անդամ կապված է խմբի մյուս անդամների հետ այնպես, որ չի կարող հասնել հաջողության,քանի դեռ նրանք չեն հասել հաջողության և հակառակը՝ խմբի բոլոր անդամները գիտակցում և զգում են,որ իրենք օգտվելու են կամ լողալու են միասին։Գոյություն ունեն բազմաթիվ գործնական ձևեր և կանոններ,որոնք ուսուցիչը կարող է օգտագործել խումբը կառուցելու և դրական փոխկախվածությունը փոքր խմբերում խթանելու համար։Առավել հաճախ ուսուցիչների կողմից կիրառվում են հետևյալ հինգ ձևերը.

-Փոխկախվածություն ըստ խմբային նպատակների.համոզվելու համար,որ սովորողներն իրոք հավատում են և վստահ են,որ իրենք <<սուզվելու կամ լողալու են միասին>> և որ նրանց համար իրոք կարևոր է,թե ինչպես են սովորում իրենք և իրենց խմբի անդամները,ուսուցիչը պետք է խմբերի համար մշակի համատեղ ուսուցման հստակ նպատակներ։Օրինակ,ուսուցիչը կարող է ասել.<<սովորեք հանձնարարված նյութը և ապահովեք,որ ձեր խմբի անդամներից յուրաքանչյուրը նույնպես սովորի նույն նյութը>>։Այս դեպքում խմբերին պետք է տրվի բավարար ժամանակ՝ ուսուցման

նպատակներն հասկանալու և այդ նպատակներին համատեղ հասնելու պարտավորություն ստանձնելու համար:

-Դերային փոխկախվածություն,երբ պատասխանատվությունը բաշխվում է իրենց խմբի անդամների միջև:ՈՒսուցիչը կարող է խմբի յուրաքանչյուր անդամին տալ համապատասխան դեր՝ընթերցող, ստուգող,խրախուսող,ժամանակ պահող և այլն:

-Ռեսուրսային փոխկախվածություն.առաջանում է այն դեպքում,երբ անհրաժեշտ է բաշխել կամ կիսել ունեցածմիջոցները(խմբի յուրաքանչյուր անդամի տրվում է ընդհանուր առաջադրանքի միայն մի մասը):

-Փոխկախվածություն ըստ հաջողության,երբ հաջողության դեպքում խումբը ստանում է մեկ մրցանակ:

-Փոխկախվածություն ըստ արդյունքի առաջանում է այն ժամանակ,երբ յուրաքանչյուրը գիտի,որ կհասնի իր նպատակին միայն այն դեպքում,երբ մյուսները հասնեն նույնպես իրենց նպատակին:

2.2 **ԴԵՄ ԱՌ ԴԵՄ ԽՄԲԱՅԻՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ**

Երբ խմբերում ստողծվել է դրական փոխկխվածություն,անհրաժեշտ է առավելագույնի հասցնել աշակերտների կողմից միմյանց սատարելու գործոնը՝ օգնելով,աջակցելով,նպաստելով,խրախուսելով և գովաբանելով միմյանց սովորելու ջանքերը:Այս դեպքում խմբի անդամներն աշխատում են դեմ-դիմաց նստած և ոչ թե շարքերով,որն ապահովում է խմբի անդամների արդյունավետ հաղորդակցումը և նրանց առավելագույն մասնակցությունը խմբային քննարկումներին:

Խթանող փոխազդեցության արդյունքում սովորողները՝

- համագործակցում են ավելի արդյունավետ
- փոխանակում են անհրաժեշտ տեղեկատվություն…
- համատեղ մշակում և վերլուծում են ինֆորմացիան
- ապահովում են հետադարձ կապ խմբի հոտագա աշխատանքի բարելավման նպատակով

- քաջալերում և աջակցում են միմյանց ընդհանուր նպատակին հասնելու համար:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱԾԵՑԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Համագործակցային խմբերում անհատական հաշվետվությունը նշանակում է,որ խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն է կրում խմբի ուսուցման արդյունքների համար և գիտի,որ իր ներդրումը կարևոր է խմբի հաջողությունն ապահովելու համար:Անհատական հաշվետվությունն ու պատասխանատվությունը նշանակում են,որ խմբի յուրաքանչյուր անդամ

- պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու
- պատասխանատվություն է կրում ուսուցման արդյունքների համար
- խմբի մաս է
- կարիք ունի գաղափարներով և մտքերով կիսվելու խմբի մյուս անդամների հետ
- կարող է լինել խմբի ներկայացուցիչը
- պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը
- գիտի,որ գնահատվելու է խմբի յուրաքանչյուր անդամի առաջընթացն ու ներդրումը:

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խմբային աշխատանքներ կատարելիս սովորողներն անց նում են այնպիսի իրավիճակներով,որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ:Հաճախ այդ հմտություններին չտիրապետելու պատճառով խմբային աշխատանքը ձախողվում է:Այս հմտությունները ներառում են վարքագծային այնպիսի որակներ,ինչպիսիք են միջանձնային փոխհարաբերություններում վստահության ստեղծումը,ղեկավարման հմտությունները,հաղորդակցումը և միմմյանց աջակցելը,որոշումներ կայացնելու և կոնֆլիկտներ լուծելու հմտությունները:Սոցիալական հմտություններն ըստ համագործակցային ուսուցման ներառում է հայտնի չորս մակարդակները.

Ձևավորում-գործունեություն-ձևակերպում-խմորում

-Ձևավորման մակարդակի հմտություններն այն հմտություններն են,որոնք անհրաժեշտ են համագործակցային ուսուցման խմբերի հիմնադրման և գործունեության համար։Այս մակարդակի հմտություններն օգնում են ձևավորել խումբը և սահմանել վարքագծի համապատասխան նորմեր։

-Գործունեության մակարդակի հմտությունները կարևոր են խմբի աշխատանքը կազմակերպելու համար,ընդ որում խումբն ունի երկու խնդիր. կատարել առաջադրանքը և անդամների միջև հաստատել աւդյունավետ աշխատանքային փոխհարաբերություններ։

-Ձևակերպման մակարդակի հմտություններն անհրաժեշտ են ուսուցանվող նյութը խորապես հասկանալու,կատարած գործողությունները հիմնավորելու,բարձրակարգ մտածողության ռազմավարություններ խթանելու,ինչպես նաև հանձնարարված նյութի կատարյալ տիրապետման համար։

-Խմորման մակարդակի հմտություններն ուղղված են ուսումնասիրված նյութը վերաիմաստավորելուն,իրերի և երևույթների միջև եղած հակասություններն ճանաչելի դարձնելուն,նոր տեղեկատվություն փնտրելուն և այլոց եզրզհանգումների ետևում իրականը հայտնաբերելուն,ակադեմիական բանավեճի մեջ մտնելուն։

5. ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑԱՆ ՄԵՋ

Թվում է, թե համագործակցային ուսուցումն օգտագործող ուսուցիչն ավելի քիչ է աշխատում,քան ավանդական մեթոդներով աշխատող ուսուցիչը։Սակայն իրականում համագործակցային ուսուցումն օգտագործող ուսուցիչն ստանձնում է մեծ թվով պարտականություններ,որոնց մեջ մտնում են.

.դասերի վարժությունների պլանավորում,զարգացում

.սովորողների խմբերի կազմում

.սովորողների տեղաբաշխում

.սովորողներին առաջադրանքի ներկայացում և բացատրում

.խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն

.սովորողներին օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում

.գնահատում։

ՈՒսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մատուցումը,այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը։Ժամանակի բաշխումը հատկապես կարևոր է համագործակցային ուսուցման արդյունավետությունն ապահովելու գործում,երբ աշակերտները կատարում են տարբեր առաջադրանքներ,տարբեր տեղերում,տարբեր խմբերի/զույգերի հետ։Այս բոլորը հաստատում են,որ ուսուցիչը կարևոր դեր ունի համագործակցային ուսուցման կազմակերպման գործընթացում։

5. 1 ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԵՐԸ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆՈՂ

Որոշում է՝

Խմբերի մեծությունը

Խմբերի ձևավորման սկզբունքները

Սենյակի դասավորվածությունը

Անհրաժեշտ նյութերն ու ռեսուրսները

Դերերը

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՄՇԱԿՈՂ և ԴՐԱԿԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ

Ապահովում է՝

Առաջադրանքի ներկայացումը

Նպատակի հստակեցումը

Դրական փոխկապվածության ձևավորումը

Անհատական պատասխանատվության ձևավորումը

Միջխմբային համագործակցության ձևավորումը

Հաջողության չափանիշների պարզաբանումը

Ցանկալի վարքի չափանիշների սահմանումը

ԳՆԱՀԱՏՈՂ

Գնահատում է՝

Աշակերտների ուսումնառության որակը և քանակը

Խմբի գործունեությունը

ՎԵՐԱՀՍԿՈՂ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ

Վերահսկում է՝

Աջակցում է առաջադրանքի կատարմանը

Վերահսկում է աշակերտների վարքագիծը

Ամփոփում է։

5. 2 Դասի պլանի ձև

ՈՒսուցչի անունը----------դասարանը----------

Ամիս,ամսաթիվ----------տևողությունը----------

Առարկան----------

Քայլ 1. Ընտրել թեման----------

Քայլ 2. Հրահանգներ տալուց առաջ հստակեցնել նպատակները և միջոցները

Ակադեմիական նպատակներ----------

Հմտությունների զարգացման նպատակներ----------

Անհրաժեշտ պարագաներ----------

Սենյակի կահավորումը----------

Խմբի չափը--------խմբի կառուցվածքը----------

Դերերը խմբում----------

Քայլ 3. Բացատրել առաջադրանքը և համագործակցության նպատակը

1.առաջադրանքը----------

2.հաջողության չափանիշներ----------

3.դրական փոխկախվածություն----------

4.անհատական հաշվետվություն----------

5.ներխմբային համագործակցություն----------

6.Առանձնահատուկ վարքագծեր----------

Քայլ 4.Վերահսկում և միջամտում

1.Ընթացակարգի վերահսկաում----------

2.Վերահսկում ուսուցչի կողմից----------աշակերտի կողմից----------

3.Միջամտություն առաջադրանքի կատարմանն ապահովելու համար----------
---

4.Միջամտություն թիմին աջակցելու համար----------

5.Այլ----------

Քայլ 5.Խմբային գործընթացի գնահատում և մշակումներ

1.Խմբի անդամների անհատական ուսումնառության գնահատում----------
---

2.Խմբային արդյունավետության գնահատում----------

3.Փոքր խմբային գործընթաց/մշակում----------

4.Դասարանային մշակումներ----------

5.Գծապատկերների գործածում----------

6.Դրական հետադարձ կապյուրաքանչյուր աշակերտին----------

7.Բարելավման նպատակներ----------

8.Հաջողության տոնումը----------

9.Այլ ----------

5. 3 Դասից հետո

Ամեն դասից հետո դասի վերաբերյալ տպավորությունները հակիրճ գրառել առանձին տետրում։Վերլուծել դասի ուժեղ և թույլ կողմերը։

- Ինչը և ինչպես կարելի է ավելի լավ անել հաջորդ անգամ։
- Արդյոք ճիշտ էր հաշվարկված ժամանակը։
- Արդյոք իրականացան դասի նպատակները՝ որն ինչ չափով։
- Կիրառվել են համագործակցային ուսուցման բոլոր տարրերը։
- Ինչու ինչ -որ բաներ չստացվեցին։ ՈՒղիներ փնտրել շտկելու դրանք։

Վերջում ամրագրել հաղթանակները և հաջողությունները։

Եզրակացություն

Համագործակցային ուսուցման կարևորագույն հետևանքը անձի զարգացումն անհատականության ձևավորումն է, քանի որ անհատականությունը <<ձևավորվում է մարդկանց հետ շփման արդյունքում: Մարդկանց հետ փոխառնչվելու արդյունքում, մենք ավելի լավ ենք հասկանում ինքներս մեզ>>:
Կյանքի որակը համագործակցային ուսուցման մեկ այլ դրական արդյունք է, քանի որ բոլոր մարդիկ իրենց կյանքում կարիք ունեն արդյունավետ փոխհարաբերությունների:
Մարդկանց հետ դրական և աջակցող փոխհարաբերությունները մեծ ազդեցություն ունեն նաև հոգեբանական առողջության վրա: Այդպիսի փոխհարաբերություններ ստեղծելու և պահպանելու անկարողությունը շատ հաճախ առաջացնում է տագնապ, դեպրեսիա, հուսահատություն, օտարում և միայնակություն:
Համագործակցային ուսուցման ևս մեկ հետևանք է ստրեսի հաղթահարման ունակությունը: Աջակցող փոխհարաբերությունների դեպքում նվազում է սթրեսային իրավիճակների թիվը և ծանրությունը, նվազում է տագնապը:
Դրական և աջակցող փոխհարաբերությունները նպաստավոր են նաև ֆիզիկական առողջության համար: Համագործակցային ուսուցումը միտված է նաև անձի հակումների բացահայտմանը և մասնագիտական կողմնորոշմանը, ինչն էլ նպաստում է սիրված աշխատանք գտնելուն, դրա արդյունավետությանը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելուն, աշխատանքային խնդիրները լուծելուն, մասնագիտական հաջողություններին:
Սրանք էական հաջողություններն են, որոնք պահանջվում են աշխատանքի շուկայում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան «Համագործակցային ուսուցում» «Անտարես» հրատ. Երևան 2006

2. Ս. Վարդանյան, Լ. Հարությունյան « Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում» «Նոյյան Տապան» հրատ. Երևան 2003